

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 1919-Ն, ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի N 417-Ն, ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի N 711-Ն ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի N 781-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

9 օգոստոսի 2012 թվականի N 1083-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 1919-Ն, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի N 417-Ն, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի N 711-Ն ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի N 781-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919-Ն որոշման NN 11 և 12 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեից գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1789-Ն և դեկտեմբերի 22-ի N 1919-Ն որոշումներում լրացումներ կատարելու մասին» N 417-Ն որոշման N 4 հավելվածում կատարել փոփոխություն՝ համաձայն N 3 հավելվածի:
3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի պետական բյուջեից գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 1919-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 711-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
  - 1) որոշման 1-ին կետում «10.013,950,0» թիվը փոխարինել «10,014,949.1» թվով.
  - 2) որոշման 1-ին կետի՝
    - ա. 9-րդ ենթակետում «260,000.0» թիվը փոխարինել «261,000.8» թվով.
    - բ. 10-րդ ենթակետում «632,000.0» թիվը փոխարինել «631,998.3» թվով.
- 3) որոշման NN 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9 և 10 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12 և 13 հավելվածների:
4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեից գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 29-ի N 417-Ն ու 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 1919-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 781-Ն որոշման N 3 հավելվածում կատարել փոփոխություն՝ համաձայն N 14 հավելվածի:

5. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին՝ առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 24-ի N 309-Ն որոշմամբ հաստատված կարգով՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ համատեղ քննարկել և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ ներկայացնել առաջարկություն սույն որոշման N 7 հավելվածի 3.2-րդ կետով և N 14 հավելվածով նախատեսված միջոցների բաշխման վերաբերյալ:

6. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի պետական բյուջեից գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 1919-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 711-Ն որոշման N 10 հավելվածի 3-րդ կետով նախատեսված միջոցները բաշխել սույն որոշման N 15 հավելվածի ցանկին համապատասխան:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**Տ. Մարգարյան**

2012 թ. օգոստոսի 31  
Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ  
ՄԱՅԻՍԻ 24-Ի N 711-Ն ՈՐՈՇՄԱՆ N 8 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ**

(հազ. դրամ)

NN Ը/Կ	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների և աշխատանքների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)	
		ինն ամիս	տարի
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>3,484.8</b>	<b>0.0</b>
	<b>այդ թվում՝</b>		
<b>1</b>	<b>Շենքերի և շինությունների շինարարություն</b>	<b>(3,079.5)</b>	<b>(3,079.5)</b>
	<b>որից՝</b>		
1.1	Գորիս համայնքի թիվ 5 դպրոցի ջեռուցման համակարգի կառուցում	(936.6)	(936.6)
1.2	Դարբաս համայնքի Շամբ բնակավայրի դպրոցի կառուցում	(1099.4)	(1099.4)
1.3	Վերիշեն համայնքի խմելու ջրամատակարարման բարելավում	(1,043.5)	(1043.5)
<b>2</b>	<b>Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում</b>	<b>6,564.3</b>	<b>3,079.5</b>
	<b>որից՝</b>		
2.1	Կապան համայնքի թիվ 6 դպրոցի վերանորոգում	(1,050.0)	(1,050.0)
2.2	Գորիս համայնքի թիվ 2 դպրոցի սպորտ-դահլիճի տանիքի վերանորոգում	0.0	(504.8)
2.3	Ծղուկ համայնքի դպրոցի վերանորոգում	10,337.8	10,337.8
2.4	Խնձորեսկ համայնքի դպրոցի մարզադահլիճի վերանորոգում	(502.3)	(502.3)
2.5	Կապան համայնքի արվեստի քոլեջի համերգային դահլիճի վերանորոգում	(450.0)	(450.0)
2.6	Ագարակ համայնքի արվեստի դպրոցի վերանորոգում	(7,700.0)	(7,700.0)
2.7	Գորիսի մանկավարժական քոլեջի մասնակի վերանորոգում	(461.0)	(461.0)
2.8	Կապան համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում	(1,600.0)	(1,600.0)
2.9	Կապան համայնքի Մ. Պապյան ճանապարհի ասֆալտապատում	(3,400.0)	(3,400.0)

2.10	Գորիս համայնքի Ա. Սաթյան ճանապարհի ասֆալտապատում	(2,908.9)	(2,908.9)
2.11	Միսիան համայնքի Գայի և Թումանյան ճանապարհների ասֆալտապատում	0.0	(2,980.0)
2.12	Մեղրի համայնքի կառուցողների ճանապարհի ասֆալտապատում	(2,841.4)	(2,841.4)
2.13	Ագարակ համայնքի ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում	(1,771.2)	(1,771.2)
2.14	Հարթաշեն համայնքի դպրոցի մարզադահլիճի տանիքի վերանորոգում	18,911.5	18,911.5

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար**

**Դ. Սարգսյան**